

ՍՈՒՄ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՌԱԴԻՈՑԻԿԿԱՑՄԱՆ ԵՎ
ՔԱԴՐՈՆԱԶՈՐՐԴՄԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻ ՍԵԿՏՈՐ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՐՃԱԼԻՔԱՑԻՆ ՌԱԴԻՈԿԱՊԻ ՌԱԴԻՍՏՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

ОБЯЗАТЕЛЬНЫ
ЭКЗЕМПЛЯР

621

Ճ-98

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՌԱԴԻՈԿՈՄԻՏԵ
Ե Ր Ե Վ Ա Ն 1940

15 MAY 2013

9659

521
5-98

30 JUL 2010



այ՝

Ծ Ր Ա Գ Ի Ր¹⁾

Կարճալիքային ռադիոկապի ռադիստների պատրաստման դասընթացների

ՆՊԱՏԱԿԱԳՐՈՒՄ

Խմբակավարի նպատակն է պատրաստել կարճալիքավոր ռադիստներ, որոնք տիրապետեն կարճալիքների ռադիոտեխնիկայի նախնական գիտելիքներին, գիտենան Մորզեի այբուբենը, կոդը, ժարգոնը և կարողանան ինքնուրույն սպասարկել կարճալիքային ընդունիչ սարքավորումներ:

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի դաստիարակել քաղաքականապես գրագետ կապի աշխատողներ, անսահման նվիրված կենինի-Ստալինի կուսակցությանը և իրենց սոցիալիստական հայրենիքին, անհաշտ աշխատողներ սովորական ժողովրդի թշնամիների դեմ մղվող պայքարում:

Ուսուցման ժամանակի հաշիվը

Առարկաների անունները	Ուսուցման ժամերի քանակը
Քաղաքական պատրաստակաճություն . . .	20 ժամ
էլեկտր-ռադիո-տեխնիկա	70 »
Լսողությամբ ընդունում	60 »
Ը ն դ ա մ ե ն ը . . .	150 ժամ

1) Ծրագիրն ընդօրինակված է ՍՍՌՄ Պաշտ-Ավիաբեմի կենտ. Սովետի հատուկ հրատարակությունից:



813
41

ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքական պատրաստականություն (20 ժամ)։

Քաղաքական պատրաստականության հիմքում դրված պետք է լինի ընկեր Ստալինի հաշվետու զեկուցումը պարտիայի 18-րդ համագումարում ՀամԿ(բ)Պ Կենտկոմի աշխատանքի մասին, ՀամԿ(բ)Պ 18-րդ համագումարի որոշումները, ՍՍՌՄ միջազգային և ներքին քաղաքականության ընթացիկ հարցերը և ընկեր Վ. Մ. Մոլոտովի պատմական ճառը՝ արտասանված ռադիոյի միջոցով 1939 թվի սեպտեմբերի 17-ին։

Պարապմունքների ծրագիրը մշակվում է մարզադիտկոմիտեների կողմից տեղական պարտիական կոմիտեների համաձայնությամբ։

Էլեկտրո-ռադիոտեխնիկա (70 ժամ)։

Խնդիրները, ծանոթացնել սովորողներին ռադիոսիրողների (այդ թվում կարճալիքային), շարժման, նրա կառուցվածքի, խնդիրների և նշանակության հետ։

Տվյալ ծրագրի ծավալով անցնել էլեկտրո-ռադիոտեխնիկայի տեսությունը և գործնական մասը։

Ա Ռ Ա Ջ Ի Ն Թ Ե Մ Ա

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԷՔ

Կարճալիքավոր-ռադիոստաների խմբակի հիմնական նպատակը և խնդիրները։ Խմբակի ծրագիրը և աշխատանքի կարգը։ Համառոտ պատմական ակնարկ ռադիոտեխնիկայի մասին։ Հերց և Մակսվել, Պոպով և Լի-դե-Ֆորեստ։

Ռադիոյի դերը և նշանակությունը մեր երկրում։ Լենինի և Ստալինի դերը խորհրդային ռադիոյի

զարգացման գործում։ Ռադիոն կապիտալիստական երկրներում։

Ռադիոյի կիրառման բնագավառները ներկայումս, կապ, ռադիոհաղորդում, տեղեկատվություն, տեղեմեխանիկա։ Ռադիոյի կիրառումը ռազմական գործում։

Համառոտ ակնարկ կարճալիքային ռադիոկապի զարգացման մասին և ռադիոսիրողների դերը։

Կարճալիքավոր ռադիոսիրողների նշանակությունը մեր երկրի պաշտպանունակության ամրացման և կապի կազմակերպման գործում — 2 ժամ։

Ե Ր Կ Բ Ո Ր Դ Թ Ե Մ Ա

ՆՅՈՒԹԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Ժամանակակից պատկերացումն ատոմի վառուցվածքի մասին։

Էլեկտրոններ և պրոտոններ։ Էլեկտրոնների և պրոտոնների փոխազդեցությունը։ Միջուկ և էլեկտրոններ։ Էլեկտրոններ մետաղներում և դիէլեկտրիկներում։

Էլեկտրական լիցքեր։ Բացասական և դրական լիցքերը որպես էլեկտրոնների հավելորդ և պակասորդ։

Էլեկտրական ինդուկցիա։ Էլեկտրական լիցքերի փոխազդեցության օրենքները։ Էլեկտրականության քանակությունը։ Էլեկտրական լիցքի ուժաղաշտ։ Էլեկտրական դաշտ, դաշտի լարվածության պոտենցիալ։ Պոտենցիալների տարբերությունը։ Էլեկտրական հոսանքը որպես էլեկտրական լիցքերի շարժում, հազորդիչներ, կիսահաղորդիչներ և մեկուսիչներ։ Էլեկտրա-

կան հոսանքը մետաղի մեջ որպես «ազատ» էլեկտրոնների շարժում— 2 ժամ:

Զ Ո Ր Ր Ո Ր Գ Թ Ե Մ Ա

ՕՄԻ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Պոտենցիալների տարբերությունը և էլեկտրոշարժ ուժ: Լարման և էլեկտրոշարժ ուժի չափման միավորը — ուլտ (միկրոտոլտ, միլիտոլտ, կիլոտոլտ):

Էլեկտրական քանակությունը և էլեկտրական հոսանքի ուժը: Չափման միավորներ — կուլոն և ամպեր (միկրոամպեր, միլիամպեր):

Էլեկտրական շղթայի դիմադրության, լարման և հոսանքի ուժի մեջ գոյություն ունեցող կախումը: Օմի օրենքը փակ շղթայի համար:

Հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը: Լարման անկումը շղթայի մասերում: Էլեկտրական հոսանքի հզորությունը: Հզորության չափման միավորը — վատտ (միլիվատտ, հեկտովատտ, կիլովատտ): Հաստատուն հոսանքի հզորության բանաձևը (ֆորմուլա):

Էլեկտրական հոսանքի աշխատանքը: Հոսանքի աշխատանքի չափման միավորը — վատտժամ (հեկտովատտ ժամ, կիլովատտ ժամ (2 ժամ):

Զ Ո Ր Ր Ո Ր Գ Թ Ե Մ Ա

ՀԱՂՈՐԳԻԶՆԵՐԻ ԳԻՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կիրխոֆի 1-ին և 2-րդ օրենքները

Դիմադրության մեծության կախումը հաղորդիչի նյութերից: Դիմադրության միավորը օմ (մեգօմ):

Տեսակարար դիմադրություն: Բանաձև դիմադրության մեծությունը որոշելու համար:

Հաղորդիչների դիմադրությունների փոփոխումը կախված նրանց ջերմությունից: Ջերմային գործակից:

Հաստատուն և փոփոխական դիմադրությունների

Կիրխոֆի 1-ին օրենքը: Դիմադրությունների հաջորդաբար, զուգահեռ և խառն միացումները: Ռեոստատների և պոտենցիոմետրների կառուցվածքը և միացման եղանակները: Լարվածության անկումների գումարը փակ շղթայում:

Կիրխոֆի 2-րդ օրենքը — 2 ժամ:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Թ Ե Մ Ա

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հասկացողություն էլեկտրական ունակության մասին

Ունակության չափման միավոր — ֆարադ (միկրոֆարադ, սանտիմետր), նրանց մեծությունների հարաբերությունը: Հասկացողություն կոնդենսատորի մասին: Դիէլեկտրիկ: Դիէլեկտրիկական հաստատունները, ավելի շատ օգտագործվող դիէլեկտրիկներ: Կոնդենսատորների հաջորդաբար, զուգահեռ և խառն միացումներ: Հաստատուն ունակության կոնդենսատորների կառուցվածքը: Էլեկտրոլիտիկ կոնդենսատորներ:

Փոփոխական կոնդենսատորների հիմնական սխեմաները և նրանց կառուցվածքը (ուղղունակային, ուղղահանգիստական, ուղղալիքային, միջինգծային):

Փոփոխական կոնդենսատորներ օդային և պինդ դիէլեկտրիկով (2 ժամ):

ՀՈՍԱՆՔԻ ՍԿՋԲՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գալվանական էլեմենտներ: Գալվանական էլեմենտների կառուցվածքը: Բեվեռացման երեվուլթը: Ապաբեվեռացուցիչներ՝ պինդ, հեղուկ և գազային էլեմենտների էլեկտրոշարժ ուժը և ինչից է նա կախված: էլեմենտների ներքին դիմադրությունը: Ներքին մեծ դիմադրության նշանակությունը:

Ինչից է կախված էլեմենտների ներքին դիմադրությունը:

Տարողության շափման միավորը — ամպերժամ: էլեմենտների հաջորդաբար, զուգահեռ և խառն միացումներ: Անոդային մարտկոցների կառուցվածքը:

Գալվանական էլեմենտների պահպանման և խրնամքի հիմնական կանոնները: Ամենաշատ օգտագործվող էլեմենտների ծառայության ժամանակամիջոցը — 2 ժամ:

ՀՈՍԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ակումնոլյատորներ: Կապարային (թթվոտային) ակումնոլյատորներ և նրանց կառուցվածքը: Կապարային ակումնոլյատորների լարվածությունը: Կապարային ակումնոլյատորներում կատարվող պրոցեսները: Ակումնոլյատորի ունակությունը: էլեկտրոլիտը և նրա պատրաստելը: էլեկտրոլիտին առաջադրվող պահանջները: Կապարային ակումնոլյատորի լիցքավորման ուժի մը, լիցքավորման մաքսիմում հոսանքը: Ակումնոլյատորի շահագործման ուժի մը, պարպման մաքսիմում հոսանքը: Ակումնոլյատորի փնքնապարպումը: Ակումն-

նոլյատորի թիթեղների սուլֆատապատում, նրա պատճառները և վերացնելը:

Կարճ միացումը և նրա հետևանքները: Պայթուցիկ գազերի անջատումը ակումնոլյատորից:

Երկաթանիդրային (ալկալիական) ակումնոլյատորների կառուցվածքը, աշխատանքը և հատկությունները:

Կապարային և երկաթանիդրային ակումնոլյատորների խնամքը և խնայողությունը:

ՄԱԳՆԻՍՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՄԱԳՆԻՍՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մագնիսական երեվուլթը: Դիամագնիսական և պարամագնիսական մարմիններ: Ֆերրոմագնիսականություն: Բնական և արհեստական մագնիսներ: Հաստատուն մագնիս: Մագնիսական ուժաղաշտ: Ուժագծերի ուղղությունը: Մագնիսական հեղեղ: Մագնիսական ինդուկցիա: Հոսանքի մագնիսական դաշտ: Ուղիղ հոսանքակիր հաղորդչի դաշտը: Շրջանային հոսանքի դաշտը: Հոսանքի ուղղություն և մագնիսական ուժագծերի ուղղության միջի կախումը: Խցանահանի կանոնը: Ամպերգալարներ: Մագնիսական հեղեղի մեծության կախումը ամպերգալարներից, մագնիսական դաշտում: Երկաթյա միջուկ: էլեկտրոմագնիս: Մագնիսական շղթա:

Հեռախոսային փողի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:

Մագնիսական դաշտում հոսանքակիր լարի վրա

ազդող ուժերը: Աջ ձեռքի կանոնը: Այդ ուժերի օգտագործումը (էլեկտրոմոտորներ, էլեկտրոմագնիսական շափող գործիքներ և այլն): էլեկտրոմագնիսական շափող գործիքների կառուցվածքը և աշխատանքը— 4 ժամ:

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ Թ Ե Մ Ա

ԷԼԵԿՏՐՈՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԻՆԳՈՒԿՅԻԱ

էլեկտրոմագնիսական ինդուկցիայի երեկույթ: Ինդուկցիայի ինդուկցված էլեկտրոշարժ ուժը և հոսանքը հաղորդիչի մեջ, շնորհիվ հաղորդիչի շուրջը գտնվող մագնիսական դաշտի փոփոխության: Ինդուկցիայի զոնայի հոսանքների ուղղությունը: էլեկտրոմագնիսական ինդուկցիայի օրենքի գործնական օգտագործումը: Հասկացողություն տրանսֆորմատորի մասին: Առաջին և երկրորդ փաթույթները: Լարվածության բարձրացումը և իջեցումը: Առաջին և երկրորդ փաթույթների լարվածությունների կախումն առաջին և երկրորդ փաթույթների գալարների թվից: Տրանսֆորմատորային գործակից: Հասկացողություն երկաթյա միջուկում գոյություն ունեցող կորուստների մասին: Ֆուկոյի հոսանք և հիստերեզիս: Ֆուկոյի հոսանքից դերժ մնալու համար իրարից մեկուսացված երկաթյա բարակ թիթեղներից բաղկացած միջուկների օգտագործումը— 4 ժամ:

Տ Ա Ս Ե Ր Ո Ր Դ Թ Ե Մ Ա

ՓՈՓՈԽԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ

Փոփոխական հոսանքի ստանալը: Փոփոխական հոսանքի գրաֆիկական պատկերը: Տատանման տևո-

ղություն: Ամպլիտուդա: Հաճախականության և պարբերության փոխադարձ կախումը: Արդյունաբերական հոսանքի հաճախականությունը: Հաճախականությունների դիսպազոնները, որոնք օգտագործվում են ուղիտեխնիկայում— 2 ժամ:

Տ Ա Ս Ն Մ Ե Կ Ե Ր Ո Ր Դ Թ Ե Մ Ա

ԻՆԳՈՒԿՅԻԱՆ ԵՎ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՖՈՓՈԽԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՇՂԹԱՅՈՒՄ

Ինքնինդուկցիայի երևույթը: Ինքնինդուկցիայի էլեկտրոշարժ ուժը: Սուլենոիդի ինքնինդուկցիան: Երկաթյա միջուկով կոճի ինքնինդուկցիան: Ինքնինդուկցիայի գործակիցը: Ինքնինդուկցիայի շափման միավորը— հենրի (միլիհենրի, միկրոհենրի, սանտիմետր): Ինքնինդուկցիաների հաջորդաբար և զուգահեռ միացումները: Ինդուկտիվ դիմադրություն: Ինդուկտիվ դիմադրության կախումը հաճախականությունից: Կոճեր փոփոխական ինքնինդուկցիայով: Դրոսել: Ինքնինդուկցիոն կոճով և դիմադրությամբ կազմված շղթայի դիմադրությունը փոփոխական հոսանքին:

Փոփոխական հոսանքի անցնելը կոնդենսատորի միջով: Կոնդենսատորի դիմադրությունը փոփոխական հոսանքին: Լարվածությունների ռեզոնանս, հոսանքների ռեզոնանս— 4 ժամ:

Տ Ա Ս Ն Ե Ր Կ ՈՒ Ե Ր Ո Ր Դ Թ Ե Մ Ա

ԷԼԵԿՏՐՈՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱՆՎԵՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ՏԱՐԱՇՈՒՄԸ

էլեկտրական և մագնիսական դաշտերի փոփոխությունների միջև եղած կապը: Փոփոխական հո-

սանքով սնվող հաղորդիչի շուրջը ստեղծված մագնիսական և էլեկտրական դաշտը: էլեկտրոմագնիսական դաշտի տարածումը տարածության մեջ: էլեկտրոմագնիսական ալիքներ: էլեկտրոմագնիսական ալիքների ճառագայթումը: Առանց լարերի հաղորդման համար բարձր հաճախականության էլեկտրոմագնիսական տատանումների առկայության անհրաժեշտությունը: Բարձր հաճախականության տատանումներ ստանալու հղանակը: Տատանումների հաճախականության և ալիքի երկարության մեջ եղած կապը: Ռադիոհաղորդման դիապազոն, երկար, միջին, կարճ և ուլտրակարճ ալիքներ: էլեկտրոմագնիսական ալիքների տարածման հիմնական օրենքները: Երկրի մակերեսի (ցամաք, ծով), օրվա ժամանակի (գիշեր, ցերեկ), տարվա եղանակների (ձմեռ, ամառ) ազդեցությունն ալիքների տարածման վրա: Խեփխաչը շերտը:

Մեռյալ գոտիներ: Ֆեդինգի երեվույթը: Երկար և կարճ ալիքների տարածման պայմանների տարբերությունը: Կարճ ալիքների առավելությունները և պակասությունները: Ուլտրակարճ ալիքների տարածման առանձնահատկությունները: Ուլտրակարճ ալիքների օգտագործումը կապի համար: Ուլտրակարճ ալիքների առավելությունները և պակասությունները:

Հասկացողություն դեցիմետրային ալիքների մասին: Բարձր հաճախականությունների մոդուլացիա ցածր հաճախականության տատանումներով: Մոդուլացիայի ենթարկված բարձր հաճախականության տատանումների վերածվելը ցածր հաճախականության տատանումների: Գետեկտավորում — 4 ժամ:

ԸՆԳՈՒՆԻՉ ԱՆՏԵՆՆԱՆԵՐ

էլեկտրոմագնիսական ալիքների ազդեցության տակ առաջացած բարձր հաճախականության փոփոխական հոսանքը ընդունիչ անտեննայում: Դ ձև և Կ ձև ունեցող անտեննաներ:

Գալարների սարքավորումը և կալմի ամրացումը: Անտեննաների կառուցումը: Իջեցման և միացման կառուցումը: Շրջանակաձև անտեննաներ: Շրջանակային անտեննաների ուղղված գործողությունը: Սենյակային անտեննաներ:

Հողակցում: Նորմալ հողակցման կառուցվածքը: Զրմուղային և ջեռուցման ցանցի օգտագործումը որպես հողակցում: Ամպրոպային փոխարկիչ: Կարճալիքային հատուկ ընդունիչ անտեննաներ: Գործնական ցուցմունքներ արտաքին անտեննաների կառուցման վերաբերյալ (դիրքը էլեկտրաբարձրի և լուսավորության լարերի, հարևան անտեննաների և այլնի վերաբերյալ) — 2 ժամ:

ՏԱՏԱՆՈՂՍԿԱՆ ԿՈՆՏՈՒՐԸ ԸՆԳՈՒՆԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՉ

Բոլոր աշխատող հաղորդիչներից ինդուկցված էլեկտրաշարժ ուժի ներկայությունը ընդունիչ անտեննայում: Ընդունիչի միջոցով որևե մի կայանի զատման անհրաժեշտությունը: Ընդունիչի ընտրողականությունը:

Ռեզոնանսի երեվույթի օգտագործումը: Հոսանք-
ների ռեզոնանսը ինքնինդուկցիայի և ունակության
զուգահեռ միացման դեպքում: Լարվածությունների
ռեզոնանսը ինքնինդուկցիայի և ունակության հաջոր-
դաբար միացման դեպքում:

Կոնտուրի սեփական հաճախականությունը: Տոմ-
սոնի բանաձևը: Կոնտուրի ինքնինդուկցիայի և ունա-
կության մեջ եղած կախումը՝ կոնտուրի օմական դի-
մադրության ազդեցությունը կոնտուրի ռեզոնանսային
հատկության վրա: Զտիչ-խցան (Фильтр-пробка), ար-
տածածման (отсасыбаюший) զտիչ: Ընտրողականությունը
մի քանի կոնտուրների դեպքում— 4 ժամ:

Տ Ա Ս Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Թ Ե Մ Ա

ԵՐԿԼԵԿՏՐՈՂԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼԱՄՊ

Զերմային էֆֆեկտ (էլեկտրոնների ճառագայթում
շիկացած մետաղներից): Էդիսոնի էֆֆեկտը: Էլեկտրո-
նային էմիսիայի հոսանքի մեծության կախումը լարի
չերմությունից: Անոդի և անոդային լարվածության
դերը: Տարածային լիցք:

Էլեկտրոնային լամպի կատողը: Կատոդների տի-
պերը:

Վոլֆրամային կատոդ և ակտիվացրած կատոդներ՝
ստրիպցրած, կարբոնացրած, բարիոնմի: Նրանց աշ-
խատանքների շերմաստիճանը, տեսակարար էմիսիա-
ները:

Ակտիվացրած կատոդների առավելությունները:

Անուղղակի շիկացման լամպեր: Զեռուցման կա-
տոդի կառուցվածքը: Որակական համեմատություն
ուղղակի և անուղղակի շիկացման նույն տիպի լամ-

պերի մեջ: Մեր արտադրության լամպերի նիշերի
պարզաբանում:

Սրկէլեկտրոդային լամպ—դիոդ: Միկոդմանի հա-
ղորդականություն: Երկէլեկտրոդային լամպի օգտագոր-
ծումը որպես ուղղիչ կենտրոն: Կենտրոնի բնութա-
պիծը: Երկանոդային կենտրոններ: Մեզ մոտ օգտա-
գործվող ցածր հզորության կենտրոնների տիպերը:
Կենտրոնի միացման սխեման ուղղիչ սարքավորման
մեջ: Կենտրոնային ուղղիչ:

Մեկ և երկկիսապարբերական սխեմաներ: Բաբա-
խումների հարթում: Զտիչների կառուցվածքը: Դրոսել-
ների և կոնդենսատորների աշխատանքը և օգտագոր-
ծումը: Լարվածության բաժանարար— 4 ժամ:

Տ Ա Ս Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Գ Թ Ե Մ Ա

ԲԱԶՄ ԷԼԵԿՏՐՈՂԱՅԻՆ ԼԱՄՊԵՐ

Նոէլեկտրոդային լամպ— տրիոդ: Տրիոդի ուժե-
ղացման գործողություն: Տրիոդի բնութագիծը: Բնու-
թագծի աշխատանքային տեղամասը: Ցանցի բացա-
ւական տեղաշարժ: Լամպերի պարամետրերը: Մեզ
մոտ օգտագործվող տրիոդների հիմնական տիպերը:
Տրիոդի դետեկտորային գործողությունը: Բազմաէլեկ-
տրոդային լամպերի կարևորագույն տիպերը— էկ-
րանացրած լամպեր, պենտոդներ: Նրանց սխեմաները
և պայմանական նշանները: Էլեկտրոդների դուրս բեր-
ված ծայրերը և պանելների նշագծումը: Մետաղյա
լամպեր (ընդհանուր հասկացողություն)— 6 ժամ:

ԸՆԴՈՒՆԻՉՆԵՐ

Դետեկտորային ընդունիչ: Բյուրեղային դետեկտոր: Ընդունիչի զգայնությունը և ընտրողականությունը:

Համպային ընդունիչներ: Ուղղակի ուժեղացման ընդունիչներ և սուպերհետերոդին: Ուղղակի ուժեղացում, բարձր հաճախականության ուժեղացում:

Դետեկտավորում: Ցածր հաճախականության ուժեղացում: Ռեգեներատիվ ընդունում: Ռեգեներատորի աշխատանքի սկզբունքը: Վերադարձ կապ — ինդուկտունակային, վերադարձ կապի կանոնավորումը փոփոխական դիմադրության միջոցով:

Վերադարձ կապի ազդեցությունը ընդունիչի ըզգայնության և ընտրողականության վրա: Խանգարումներ — վերադարձ ճառագայթումը դեպի հեթեր:

Վերադարձ ճառագայթման թուլացումը: Ընդունիչի ընտրողականությունը և անցկացվող հաճախականությունների շերտերը:

Կարճալիքային ընդունիչների հիմնական սխեմաները՝ Ռեյնարց, Շնեյ, Վիգանտ, նրանց առանձնահատկությունները և աշխատանքի սկզբունքը: Էկրանացումը և օպերատորի ունակային ազդեցության վերացումը: Մեխանիկական և էլեկտրական վերներներ: Կարճալիքային ընդունիչների սնումը փոփոխական հոսանքի ցանցից: Ուլտրա-կարճալիքային ընդունիչներ: Ավելի հաճախակի առաջացվող վնասվածքներ ընդունիչներում, նրանց պատճառները որոշելը և վերացնելը — 10 ժամ:

ՈՒԺԵՂԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Բարձր հաճախականության ուժեղացումը կարճալիքային ընդունիչներում, հիմնական սխեմաները:

Ցածր հաճախականության ուժեղացուցիչների սրխեմաներ՝ դիմադրության, դրոսելային և տրանսֆորմատորային: Ցանցի լարվածության տեղաշարժը (смещение), էկրանային լարվածությունը և առանձնացնող (развязывающие) շղթաները բարձր և ցածր հաճախականության ուժեղացուցիչներում: Ուլյում և տոն-կոնտրոլ — 6 ժամ:

ԲԱՐՁՐԱԽՈՍՆԵՐ

Էլեկտրոմագնիսական ինդուկտորական և էլեկտրոդինամիկական բարձրախոսների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Բարձրախոսների կանոնավորումը և վերանորոգումը — 2 ժամ:

ՉԱՓՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ոլտմետր, ամպերմետր, որտմիլիամպերմետր, ջերմային գործիքներ: Էլեկտրական շղթայում չափող գործիքների միացման կարգը: Փոքր հզորության ուղղիչների լարվածության չափման առանձնահատկությունը: Ալիքաչափ, նրա օգտագործումը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը (պարզագույն ալիքաչափի սխեման) ալիքի երկարության չափումը ալիքաչափի օգնությամբ — 2 ժամ:

8/18

ՌԱԳԻՈՐԸՆԳՈՒՆՈՒՄ

Կարճ և ուղարկարճ ալիքների ընդունման առանձնահատկությունները: Ռադիոընդունման խանգարման գործողությունները մյուս հազորդիչներից: Մթնոլորտային խանգարումներ: Ինդուկտիվական խանգարումներ: Պայթար խանգարման յուրաքանչյուր տիպի դեմ: Խանգարումների վերացումը նրանց առաջացման տեղերում: Զտիչների բլոկ կոնդենսատորների: օգտագործումը, դրոսելացում: Լուսավորության ցանցի միջով թափանցող խանգարումների վերացումը — 2 ժամ:

ԶեռնԱՐԿՆԵՐ: Հետազայում մինչև հատուկ դասագրքի լույս ընծայվելը խորհուրդ է տրվում օգտվել հետևյալ գրականությունից:

1. **А. Батраков.** «Основы электротехники для радиолюбителя».
2. **С. Герасимов.** «Как читать радиосхемы».
3. **И. Жеребцов.** «Коротковолновые приемники».
4. **Г. Гинкин.** «Закон Ома».
5. **Ф. Берггольд.** «Расчетные формулы и таблицы для радиолюбителя».
6. **Жеребцов и Гинзбург.** «Техника коротких волн».
7. «Подготовка радиотелеграфиста и радиотехника». Редиздат ЦС Осоавиахима, М. 1939 г.
8. **А. Будылин.** «УКВ».
9. **И. Жеребцов.** «Короткие волны и их прием».

ԼՍՈՂՈՒԹՅԱՄԲ ԸՆԳՈՒՆՈՒՄ — (60 ժամ):

Խնդիրներ — սովորեցնել լսողությանը ընդունել թեկ ըստեղծ 50 նշան արագությանը ուղարկել, լատիներեն և ծածկագրած տեքստեր: Սովորեցնել Q

կոդին, ռադիոսիրողների ժարգոնին, RST և MWX ցուցանակներին, երկրների նշանակումներին: Ծանոթացնել ապարատային մատյանի վարման, QSL և անդորրագրի լրացման, ռադիոկայանների լսողության վերաբերյալ ամփոփագրեր կազմելու հետ:

ԶեռնԱՐԿՆԵՐ

1. **Чапек.** «Руководство по обучению радиотелеграфиста на слух».
2. **Ф. Бурдейный** «Q-код».
3. «Международный радиолюбительский жаргон».
4. **Ф. Бурдейный.** «Таблица распределения позывных сигналов по странам».

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

«ԷԼԵԿՏՐՈՌՈՒԿԻՈՏԵՆՆԻԿԱ» ԲԱԺՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխաններին անցկացման մեթոդը

Ուսուցման նյութի շարագրությունը դասախոսությունների միջոցով, ցուցադրելով գործիքներ և սխեմաներ: Յուրաքանչյուր ստուգման և գործնականի ամրապնդման համար անհրաժեշտ է ոչբարդ գործնական խնդիրների և կուրսի բաժինների վերաբերյալ թվաբանական օրինակների լուծում:

Որպես կանոն, սովորողները պետք է զրեն դասախոսության հիմնական մոմենտները, կիրառելով գրաֆիկական պատկերներն այն նպատակով, որպեսզի ձեռք բերեն գիտելիքներ գրաֆիկայի էլեմենտների տիրապետման մեջ:

Յուրաքանչյուր պարապմունքի համար ղեկավարը պետք է նախօրոք պատրաստի անհրաժեշտ գործիքներ, ապարատուրա, սխեմաներ, նյութեր և գործիքներ

այս կամ այն երեւոյթի ցուցադրման համար, համա-
ձայն ծրագրի:

Դասի կառուցվածքը ըստ ձևի և բովանդակութեան
պետք է համապատասխանի սովորողների կրթական
մակարդակին. ավելի պատրաստվածների համար
թույլատրվում է ավելի շատ տեսական ցուցադրում-
ներ. գործնական խնդիրների և թվաբանական օրինակ-
ների լուծմամբ, ավելի քիչ պատրաստվածների հա-
մար լավ է օգտագործել ցուցադրման մեթոդը համա-
պատասխան բացատրութիւններով:

Սովորողների մտահորիզոնի լայնացման և ան-
ցածի ամրապնդման համար ցանկալի է անցկացնել
Լքակութիւններ քաղաքային էլեկտրոկայանները, ուս-
ղիտկայանները, ռադիոհանգույցները և այլն (մասսա-
յական աշխատանքների կարգով):

«ՈՒՅՈՒՅՈՒՄԸ ԼՍՈՂՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՄԱՆ» ԲԱԺԻՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լսողութեամբ ընդունման սկզբնական ժամանա-
կաշրջանում յուրաքանչյուր նշան պետք է հաղորդվի
60—65 նշան մեկ ըոպետով արագութեամբ, պահպա-
նելով նշանների մեջ որոշակի պաուզա բոտ ժամա-
նակի: Հետագայում ընդունման արագացման մեծա-
ցումը կատարվում է ի հաշիվ պատուգալի կրճատման
և նշանների հաղորդման արագութեան: Նոր նշանի
ուսումնասիրութիւնը պետք է սկսել նրան ձայնով վեր-
արտադրման միջոցով և բանալիով: Լսողութեամբ ըն-
դունման ուսուցման առաջին իսկ օրից անհրաժեշտ է
ստուգողական աշխատանքների միջոցով սահմանել
եզովորելիք դժվարին նշանները, որոնք պետք է մտցը-

նել ուսուցման համար կազմված ռադիոգրամայի մեջ
և հետագայում հաճախ այդ նշանները կրկնել: Երբ
սովորողների խումբը հասնում է 60 նշանը մեկ ըո-
պետով լսողութեամբ ընդունմանը, խմբին պետք է
վարժեցնել անմիջապէս եթերից ընդունումով:

Պատ. խմբադիր Ս. Չարահյան
Տեխ. խմբադիր և սրբագրիչ Վ. Խաչատրյան



Վ.Ֆ.3203, պատվեր 904, տիրաժ 500

Հանձնված է արտադրության 27/IX 1940 թ.

Ստորագրված է սպաղրության 15/X 1940 թ.

ՀՍՍՍԻ ԺԿՍ-ին կից Թերթերի և ամսագրերի
սպարան, Երևան.

Վ. Բ. Ի. Պ. Ա. Կ

տպիչի է

(Տիպիչատուն)

Արտ. գործ. Մ. Խաչատրյանի ք.

Պետկոմպոստ

Գրեթե և կարգավ
(Տիպիչատուն)
Արտ. գործ. Մ. Խաչատրյանի ք.
Պետկոմպոստ

տպիչ
8 Ժ.
10 Ժ.
16 Ժ.
28
8
12

ՀՀ Ազգային գրադարան



NL0277425

9659

ПРОГРАММА

курсов подготовки радистов коротковолновой связи.

Радиокомитет при СНК Арм. ССР, Ереван 1940 г.